

## Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը (հատված)

Միջերկրյա բարեպաշտ զավակներ ի Հայաստան և ի սփյուռք, Տիրոջ Սուրբ և Հրաշափառ Հարությունը գոտեպնդող խրախույս է ամենքիս հույսով ու արիությամբ դիմագրավելու մեր երկրի առջև ծառայած մարտահրավերները՝ հատկապես հետպատերազմյան այս ծանր շրջանում, երբ բռնազավթված ու հայաթափված է Արցախը, և չեն դադարում Ադրբեջանի ծավալապաշտական ու սադրիչ գործողությունները՝ նորանոր պահանջներով, որոնք անմիջական սպառնալիքներ են ստեղծում մեր պետության անվտանգությանը:

Հանցագործ դրսևորումներով շարունակվում են Արցախի պատանդառված քաղաքական ղեկավարության և անօրինաբար գերության մեջ պահվող մեր զավակների նվաստացումները, ինչպես և արցախահայության իրավունքների անտեսման, Արցախում հայկական հոգևոր-մշակութային ժառանգության յուրացման ու ոչնչացման անթաքույց քաղաքականությունը: Դատապարտելի այս իրողությունների հանդիման մեր ժողովրդի սեպուհ պարտքն է հաղթահարել ներազգային տարածայնություններն ու անմիաբանությունը, լծվել ծանր կորուստներ կրած մեր ազգի վերքերի ամրամանը և կարողությունների մեկտեղմամբ հայրենիքի հզորացմանը:

Չորեքշաբթի  
10 ապրիլի 2024թ.  
№ 7 (616)


ՀԻՆԱՆԴԻԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru



# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



Խոզնավար

## Սյունիքի սահմաններին իրավիճակը մնում է լարված

Ադրբեջանի ՉՈւ ստորաբաժանումներն ապրիլի 8-ին ժամը 22:50-ին՝ Արավուս, ժամը 22:55-ին՝ Խոզնավարի հատվածում կրակ են բացել ՀՀ ՉՈւ դիրքերի ուղղությամբ: Այդ մասին հայտնում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից:

ՀՀ ներքին գործերի նախարարությունը հայտնում է, որ ապրիլի 7-ին, ժամը 00:30-ից 1:00 ընկած ժամանակահատվածում Սյունիքի մարզի Տեղ գյուղի հատվածում ադրբեջանական կողմից փոքր տրամաչափի զինատեսակներից արձակված անկանոն և ոչ նպատակային կրակի հետևանքով վնասվել է

տույն գյուղի տներից մեկի պատուհանը: Ադրբեջանի ՉՈւ ստորաբաժանումներն ապրիլի 6-7-ը՝ ժամը 22:45-00:25-ն ընկած ժամանակահատվածում Խոզնավարի, ժամը 22:45-00:48-ը Արավուսի հատվածում իրաձգային զենքից կրակ են բացել ՀՀ ՉՈւ դիրքերի ուղղությամբ: //

## «Ապագա ճարտարագետ» խորագրով ցուցահանդես ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում, որ վերածվեց տոնակատարության

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) Կապանի մասնաճյուղում մարտի 28-ին բացվեց «Ապագա ճարտարագետ» խորագրով մասնագիտացված «Էքսպո»-ն, որին մասնակցում էին իրավիճակված անձինք մայր բուհից, Կապանում իրանի Իսլամական Հանրապետության հյուպատոսության և Ռուսաստանի Դաշնության՝ Կապանում բացվելիք հյուպատոսարանի առաջատար խմբի ներկայացուցիչներ, ինչպես նաև մասնաճյուղի գործընկեր կազմակերպությունների, նախնառաջ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակիցներ, մարզկենտրոնի հանրակրթական դպրոցների տնօրեններ և աշակերտներ, ովքեր վաղը պիտի համայնեն ուսանողների շարքերը: Ցուցահանդեսի բացման կապակցությամբ

խամբ ՀԱՊՀ լեռնամետալուրգիայի ինստիտուտի տնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հովհաննիսյանը իրապարակեց Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտոր Գոռ Վարդանյանի շնորհավորական ուղերձը, որում մասնավորապես ասվում էր. «40 տարվա պատմություն ունեցող ՀՊՀ (Ներկայումս՝ ՀԱՊՀ) Կապանի մասնաճյուղը լուրջ դերակատարություն է ունեցել Սյունիքի տարածաշրջանում գործող արդյունաբերական ձեռնարկությունների և կազմակերպությունների անհրաժեշտ մասնագիտական կադրերով ապահովելու գործում: Օրվա միջոցառումն իր նպատակներով համահունչ է մասնաճյուղի վերապահված առաքելության իրագործմանը, որի նպատակն է դպրոցականներին, քո-

լեջի սովորողներին, ապագա դիմորդներին և ընդհանրապես լայն հասարակությանը ներկայացնելու այն մասնագիտությունները, որոնք ուսուցանվում են ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում, դրանում առկա ուսուցման պայմանները, գործընկեր ձեռնարկությունները և հետագա աշխատանքի հնարավորությունները»:  
Ուղերձում համագումար էր հայտնվում, որ միջոցառումը կծառայի նպատակին, իսկ նրա մասնակիցները կստանան այն անհրաժեշտ տեղեկատվությունը, որն ակնկալում էին:  
ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանը բարեմաղթանքի խոսքում ընդգծեց, որ «Էքսպո» ցուցահանդեսը եզակի միջոցառում է մասնաճյուղի գործունեության պատմության մեջ և երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր օժանդակել են միջոցառման անցկացմանը և այն գործընկեր կազմակերպություններին, որոնք մասնակցում են ցուցահանդեսին:  
Ողջույնի խոսքով հանդես եկավ մասնաճյուղի ուսանողական խորհրդի փոխնախագահ Միլենա Հարությունյանը:  
Պաշտոնական արարողությունից հետո միջոցառման մասնակիցները տեղափոխվեցին  
**Շարունակությունը՝ էջ 4**

## Կառավարությունը ներում է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց՝ գրավի դիմաց վերցրած վարկերը և վերադարձնում գրավադրված զարդերը

Կառավարությունը որոշում ընդունեց ներել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց՝ գրավի դիմաց վերցրած վարկերը և վերադարձնել գրավի առարկա հանդիսացող ոսկյա զարդերը: Խոսվում է այն վարկերի մասին, որոնք չեն գերազանցում 5 միլիոն դրամը: 5 միլիոն դրամը գերազանցող վարկերը, որոնք վերցվել են գրավի դիմաց, 5-ն են: Դրանց վերաբերյալ Կառավարությունը նախատեսում է առանձին բնարկում կազմակերպել:

Կառավարության նիստին որոշման նախագիծը ներկայացրեց ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը: Նա հիշեցրեց, որ ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի համապատասխան որոշման հիման վրա Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա ստեղծած հիմնադրամների, ինչպես նաև ֆիզիկական անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի, վարկային և ապահովագրական կազմակերպությունների դրամական պահանջները զիջվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որոնց դիմաց վերջիններիս օգտին թողարկվել են գանձապետական պարտատուներ: Դրա կազմում ներառված են նաև ֆինանսական կազմակերպությունների՝ ֆիզիկական անձանց ոսկյա իրերի գրավադրման վարկային պարտավորությունները:

«Խոսքը, մասնավորապես, շուրջ 6 հազար քաղաքացիների մոտ 2,8 միլիարդ դրամի չափով վարկային պարտավորությունների մասին է: Նախագծով առաջարկվում է ներել ոսկյա իրերի գրավադրման տրամադրված սպառողական վարկերով առանձին ֆիզիկական անձանց մինչև 5 միլիոն դրամ գումարի չափով վարկային պարտավորությունները և հնարավորություն ստեղծել վերադարձնել գրավադրված ոսկյա իրերը: Փաստացի, ֆինանսական կազմակերպություններում ներկայումս շարունակվում է պահվել շուրջ 1800 քաղաքացու պարտավորությունների դիմաց գրավադրված մոտ 30 կգ քաշով շուրջ 7 հազար 800 հատ ոսկյա իր: Ընդ որում, մոտ 2,3 միլիարդ դրամ ընդհանուր մացորդով պարտավորությունների կազմը հետևյալն է՝ մինչև 500 հազար դրամ վարկերը 5241 հատ են, 500 հազարից 1 միլիոն դրամի չափով վարկերը 718 հատ են, 1 միլիոնից 2 միլիոն դրամի չափով վարկերը 221 հատ են, 2 միլիոնից 2,5 միլիոն դրամի չափով վարկերը 25 հատ են, 2,5 միլիոնից 5 միլիոն դրամի չափով վարկերը 15 հատ են և 5 միլիոն դրամը գերազանցող վարկերը 5-ն են»,- ասաց Հովհաննիսյանը: Նրա խոսքով՝ կառավարության որոշման ընդունումից հետո շահառու հանդիսացող անձինք կարող են դիմում ներկայացնել ֆինանսների նախարարություն՝ վերջինիս հետ պարտքի ներման համաձայնագիր կնքելու համար:  
«Պարտքի ներման համաձայնագրի կնքումից հետո գրավադրված ոսկյա իրերը կվերադարձվեն քաղաքացիներին»,- եզրափակեց նախարարը: //





կից և կարևոր գործընկեր: Նաև ընդհանուր ավանդական արժեքներին և ազգային ինքնությունը հավատարիմ մեր ժողովուրդները միշտ բաց են եղել և շահագրգռված են փոխադարձ երկխոսության համար: Անցած ժամանակի ընթացքում մենք մեծ ճանապարհ ենք անցել: Դրական, կառուցողական փոխգործակցության անգնահատելի փորձ է կուտակվել՝ ի շահ երկու շահագրգիռ կողմերի:

Մեր փոխհարաբերություններում շատ կարևոր դեր է խաղում նաև անվտանգային ոլորտը: Հայաստանում և, ընդհանուր առմամբ, Հարավային Կովկասում կայունության ապահովման անգնահատելի գործոն շարունակում է մնալ ռուսական 102-րդ ռազմաբազան և ռուս սահմանապահների ներկայությունը:

Ռուսաստանն ու Հայաստանը գտնվում են ընդհանուր ինտեգրացիոն միավորումներում՝ ԵԱՏՄ-ում, ՀԱՊԿ-ում և ԱՊՀ-ում: Մենք համագործակցում ենք ՄԱԿ-ի կառույցներում, միջազգային այլ ձևաչափերում: Մեր երկրների միջև գործում են ամենատարբեր ոլորտներ

թվականի 11 ամիսների ընթացքում կազմել է 6,3 մլրդ դոլար: (40,8% աճ Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ): Հանրապետության տնտեսության առաջատար ճյուղերում գործում են ռուսական կապիտալի 100 տոկոսանոց կամ մասնակի մասնակցությամբ ավելի քան 40 խոշոր ձեռնարկություններ, որոնցից շատերը Հայաստանի խոշորագույն հարկատուներն ու գործատուներն են: Տեղական ձեռնարկատերերն ավանդաբար մեծ ուշադրություն են դարձնում բիզնեսի սոցիալական պատասխանատվությանը, իսկ Նրանց կողմից բացված ձեռնարկությունները Հայաստանի բիզնես լանդշաֆտի անբաժանելի մասն են և իրենց ներդրումն են ունենում հանրապետության զարգացման գործում:

Հաստատվել է, որ Միության երկրների շարքում 2023 թվականին տնտեսական աճի տեմպերով առաջատարը հենց Երևանն է: Նախորդ տարի Հայաստանի արտահանումը Եվրասիական տնտեսական միության երկրներ աճել է 41%-ով և կազմել 3,6 մլրդ դոլար:

Ս.թ. հունվարի 1-ից Միության Նախագահությունը Մոսկվայից անցել է Երևանին: Գոհունակությամբ նշում ենք, որ վարչապետ Ն.Վ.Փաշինյանի կողմից ԵԱՏՄ պետությունների ղեկավարներին ներկայացված հայկական Նախագահության առաջնահերթ ուղղությունները մեծապես համահունչ են Եվրասիական տնտեսական ինտեգրման վերաբերյալ մեր տեսակետներին: Իր հերթին, Ռուսաստանի Դաշնությունը աջակցում է գործընկերոջ երկրի տրամադրվածությանը արդյունավետ աշխատանքի համար և պատրաստ է ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն:

Անցած տասնամյակների ընթացքում շատ բան է փոխվել: Փոխվել են և երկրները, և աշխարհը, որտեղ մենք ապրում ենք: Ցավոք, մեր շփման մեջ կան և հակասություններ, և փոխադարձ պահանջներ: Սակայն երկկողմ հարաբերությունների հիմքը մնում է նույնը:

Ռուսաստանի և Հայաստանի սերտ, դաշնակցային կապերը, փոխգործակցությունը բոլոր ոլորտներում այն է, ինչը համապատասխանում է ինչպես ռուսների, այնպես էլ հայերի արմատական, իրական շահերին: Համոզված ենք, որ Մոսկվայի և Երևանի ուղիղ երկխոսության արդյունքում կուտակված անհավասարակշռությունների շտկումը, դաշնակցային նորմալ հարաբերություններին վերադառնալը ոչ միայն հնարավոր է, այլև միակ խելամիտ որոշումն է»,- ասվում է ուղերձում: //

# ՀՀ-ում, ընդհանուր առմամբ Հարավային Կովկասում, կայունության ապահովման անգնահատելի գործոն շարունակում է մնալ ռուսական 102-րդ ռազմաբազան

Ապրիլի 3-ը Հայաստանի և Ռուսաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման օրն է: Այդ կապակցությամբ ուղերձ է հղել ՀՀ-ում ՌԴ դեսպանությունը

« 32 տարի առաջ՝ 1992 թվականի ապրիլի 3-ին, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության՝ հետխորհրդային երկու նոր պետությունների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Այս համաձայնագիրը նոր փուլի սկիզբ դրեց մեր երկրների փոխհարաբերություններում, որոնց ժողովուրդները մշտապես միմյանց վերաբերվել են առա-

վել բարեկամական և ջերմ զգացումներով: Այս հիմնական փաստաթղթից ընդամենը մի բանի տարի անց երկու երկրների միջև ստորագրվեց բարեկամության, համագործակցության և փոխօգնության պայմանագիր, և դա պատահական չէ:

Ռուսաստանը մշտապես հատուկ նշանակություն է տվել Հայաստանի հետ բարեկամական կապերի ամրապնդմանը՝ որպես դաշնա-

րում համագործակցության շուրջ երկու հարյուր համաձայնագրեր: Գործում են երկկողմ համագործակցության բազմաթիվ մեխանիզմներ գրեթե բոլոր ոլորտներում՝ սկսած տնտեսական և ռազմատեխնիկական, վերջացած միջտարածաշրջանային կապերով և երիտասարդական համաժողովներով:

Դիմամիկ զարգանում է փոխգործակցությունը տնտեսության ոլորտում: Ռուսաստանը Հայաստանի խոշորագույն առևտրային գործընկերն է՝ արտաքին առևտրում 35,4 տոկոս ընդհանուր մասնաբաժնով, ինչպես նաև առանցքային ներդրող՝ ավելի քան 40 տոկոս տեսակարար կշռով: Երկկողմ առևտրաշրջանառության ընդհանուր ծավալը 2023

# Կապանում անցկացված բաց առաջնությունը տվեց իր պտուղները

Երկու օր շարունակ՝ մարտի 28-ին և 29-ին, Կապանը մարզական կյանքով էր ապրում. անցկացվեց Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի սպորտային ակրոբատիկայի բաց առաջնությունը, որն անցավ Կապանի համայնքապետի հովանու ներքո, իսկ ծախսերը հոգացել էր «Կապան» բարեգործական հիմնադրամը: Մրցապայքարին մասնակցում էին Երևանի և Գյումրու ներկայացուցչական պատվիրակությունները: Մարզադպրոցի մարմնամարզական հարթակի վրա իրենց հարաբերությունները պարզեցին մոտ 100 պատանի մարզիկներ, ովքեր մրցեցին հինգ մրցակարգով, ինչպես լիսում է միջազգային մրցումներում՝ տղաների քառյակ, աղջիկների եռյակ, աղջիկների զույգ, տղաների զույգ և խառը՝ տղա ու աղջիկ: Հրապարակաբար ցատկուղու վրա իրենց վարպետությունն էին ցուցադրում ցատկորդները: Մրցումների ավարտին հանդիսավոր պայմաններում աչքի ընկածներին պարգևներ հանձնեց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը:



Նամարզության մարզիչ Գառնիկ Սարոյանը, ով Նախ՝ երախտագիտություն հայտնեց Կապանի համայնքապետին՝ բազմաթիվ առաջնություններ բաց ձևաչափով անցկացնելը կյանքի կոչելու համար, ինչն ավելի գրավիչ դարձրեց մրցապայքարը: «Ուշագրավ է, - ասաց նա, - որ 20 օր առաջ Կապանում եղավ գեղարվեստական մարմնամարզության բազմաթիվ բաց առաջնություն: Սա պատանի մարզիկների վարպետությունը բարձրացնելու լավագույն



« Արդյունավետ միջոցն է»:

Ի դեպ, Գառնիկ Սարոյանն արժանացավ համայնքապետ Գևորգ Փարսյանի շնորհակալագրին՝ Կապանում մարմնամարզության մարզաձևի զարգացմանը և մասսայականացմանը նպաստելու ու արդյունավետ համագործակցության համար:

Գյումրու մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Խաչիկ Երանոսյանը տպավորված էր առաջնության անցկացման մակարդակից և հավելեց, որ Կապանում կարելի է մարմնամարզության և ակրոբատիկայի միջազգային մրցումներ անցկացնել: Նաև ավելացրեց, որ Գյումրու մարզական պատվիրակության անդամների թիվը հասնում է երեսունի:

Միջազգային կարգի մրցավար, Հայաստանի հավաքականի սպորտային ակրոբատիկայի մարզիչ Ռուբեն Մովսիսյանը նշեց, որ Կապանին ծանոթ է դեռևս Խորհրդային Միության տարիներից, այստեղ ուսումնամարզական հավաքներ են անցկացրել, բանի որ Կապանի մարզադպրոցի մարմնամարզական հարթակը որակյալ էր: Կարծես պատմությունը կրկնվում է: Նրա փոխանցմամբ՝ այժմ մարզադպրոցի հարթակը և ցատկուղին համապատասխանում են միջազգային չափանիշներին, և մարզաձևի պատասխանատուները մտածում են հաջորդ տարի սպորտային ակրոբատիկայի առաջնությունը Կապանում անցկացնելու մասին:

Հանրապետությունից ժամանած մարզիկները, մարզիչները, մարզաձևի մյուս ներկայացուցիչները Գյումրուց ազատ ժամերին ծանոթացան Կապանի տեսարժան վայրերին:

## Վարդան Ջհանյանի ուղերձը Երկրաբանի օրվա առթիվ



Պժվարին գործում, հայտնաբերել են խոշոր հանքավայրեր, որոնք մինչև այսօր հազարավոր ընտանիքների ապահովում են արժանապատիվ աշխատանքով և երկրի տնտեսության համար կայուն հիմք են հանդիսանում:

Վստահ եմ, մեր երկրի տնտեսության զարգացմանն ու հզորացմանը միտված բազում ծրագրերի ամենաարագ ու արդյունավետ իրականացումներն անմիջականորեն կապված են հանքարդյունաբերության և, հատկապես, «կանաչ տնտեսության» անցմամբ պայմանավորված կրիտիկական մետաղների աճող պահանջարկի հետ: Դրա համար մեզանից յուրաքանչյուրից պահանջվում է նվիրվածություն և համախմբված ամենօրյա աշխատանք, որի ներուժն ու պատրաստակամությունն այսօր մենք՝ բիզնեսի ներկայացուցիչներս տեսնում ենք ակադեմիական հանրության շրջանում:

Կրկին շնորհավորում եմ «Երկրաբանի օրվա» առթիվ և մաղթում ծրագրերի իրականացում, նոր հաջողություններ, բեղմնավոր և արդյունավետ աշխատանք», – նշված է ուղերձի մեջ, որն ընթերցել է Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության տնօրեն Վոլոդյա Կիրակոսյանը՝ ԵՊՀ-ում տեղի ունեցած՝ երկրաբաններին նվիրված միջոցառմանը: Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ կառավարության ներկայացուցիչներ, ԵՊՀ ղեկավարը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը, գիտնականներ և երկրաբաններ:

5 ԱՊՐԻԼԻ 2024 Թ.

## «Կապանի ԼՅԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սասուն Ավետիսյանի շնորհավորական խոսքը Երկրաբանի օրվա առթիվ



### Յարգելի երկրաբաններ, Սիրելի գործընկերներ,

Սրտանց շնորհավորում եմ մասնագիտական օրվա առթիվ: Դուք բարդ և չափազանց կարևոր մասնագիտություն եք ընտրել, որը պահանջում է անմատչելի նվիրում, առարկայի խորը տեսական իմացություն, գործնական հմտություններ և բացառիկ կամային հաստիքներ:

Մեր ընկերությունների ներկա մարտահրավերների զգալի մասը ձեր ջանքերի, ձեր մտքի և պատասխանատու մոտեցման համադրությամբ ենք հաղթահարելու: Ձեր աշխատանքը կարևոր նշանակություն ունի ճանապարհաշինության, քաղաքաշինական այլ կառույցների և ենթակառուցվածքների շինարարության մեջ ներգրավված մեր ընկերությունների համար: Սակայն լեռնահանքային ոլորտի մեր ձեռնարկություններում երկրաբանի դերն առանձնապես կենսական է: Աշխատանքին ձեր պատասխանատու մոտեցումից շատ բան է կախված Լիճք-վազ-թեյի ոսկու և Հահուձայանի ոսկի-բազամետաղային հանքերի աշխատանքում:

տնտեսական ներկա ցուցանիշներից մինչև ձեռնարկությունների ռազմավարական հեռանկարի կանխորոշում և երկարաժամկետ զարգացման ծրագրերի կազմում:

Ոչ վաղ անցյալում շատերի համար անհեռանկար Լիճք-վազ-թեյի հանքն այսօր դիմադրող գարգացող տնտեսական միավոր է: Մեր ձեռագիրը նույնն է մնալու Հահուձայանի ոսկի-բազամետաղային հանքում: Այստեղ մեր ստացած բարդ ժառանգության հաղթահարումը հետևողական և համալիր աշխատանք է պահանջում, որում առաջին շուկայի դերը հենց երկրաբաններինն է: Հահուձայանի հանքի շահագործմանը ներգրավված անձնակազմի, և առաջին հերթին՝ երկրաբանական թիմի ջանքերն ուղղված են լինելու այն նպատակին, որ պաշարների գիտականորեն հիմնավորված, արդյունավետ տնօրինման շնորհիվ մեր կոմբինատը տասնամյակների կտրվածքով շարունակի տնտեսական հետարան լինել Կապանի համայնքի համար և իր ներդրումն ունենա Հայաստանի տնտեսական զարգացման գործում:

Ձեր աշխատանքը մի շարք գիտակարգերի, գիտական ու գործնական ուղղությունների խաչմերուկում է, ինչի շնորհիվ այս տոնն իրենց են համարում նաև լեռնային գործի այլ ճակատներում աշխատող շատ մասնագետներ: Սա ուժեղ մարդկանց տոն է, որոնք նպատակին տանող ճանապարհին պատրաստ են սխրանքների: Մաղթում եմ, որ միշտ ժպիտով և աշխատանքի արդյունքներից բավարարվածության զգացումով վերադառնաք «դաշտից», լինեք առողջ և երջանիկ՝ ձեր ընտանիքների հետ միասին:

07.04.2024Թ.

## «Ապագա ճարտարագետ» խորագրով ցուցահանդես ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում, որ վերածվեց տոնակատարության

Սկզբը՝ էջ 1

ցին մասնագիտությունների ցուցահանդեսի օրահը, որտեղ ներկայացված էին մասնաճյուղի մասնագիտությունները՝ «Լեռնային գործ», «Օգտակար հանածոների արդյունահանում», «Օգտակար հանածոների հարստացում», «Մետալուրգիա», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Տեղեկատվական համակարգեր», «Տնտեսագիտություն»: Մասնաճյուղի

հյուրերն էին՝ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, ԱՄԻՕ բանկի, Թեղուտի և Ախալալայի պղնձամոլիբդենային կոմբինատների, Կապանի լեռնահարստացման կոմբինատի ներկայացուցիչներ: Ներկայացված էին «Լամբա» գրուպը՝ իր «Մարիլա» ապրանքանիշով, «Zealous Teach» ՓԲ ընկերությունը:

Մասնաճյուղի ղեկավարությունը ջանացել էր, որ միջոցառումը վերածվի փոքրիկ տոնա-



կատարության, ինչը միանգամայն հաջողվեց: Մասնավոր աշխույժ մթնոլորտ էր ցուցահանդեսի սրահում, որտեղ ներկաները ծանոթանում էին ցուցադրանքին, անհրաժեշտ տեղեկատվություն ստանում, նաև համոտնում «Մարիլայի» սննդատեսակներից:

Այնուհետև դպրոցի մարզադահլիճին հարակից հրապարակում տեղի ունեցավ «Արմաթն օդում»՝ անօդաչու թռչող սարքերի կրթական աշխատանքում պատրաստված մոդելների ցուցադրում:

Առավել հագեցած էր միջոցառման երկրորդ օրը: Ապագա ուսանողների համար շրջայց կազմակերպվեց մասնաճյուղում: Նրանց համար բոլոր մասնագիտություններով անցկացվեցին «Մասնագիտության ներածություն» դասընթացներ, որոնք վարեցին մասնաճյուղի ամբիոնների վարիչները և դասախոսները: Լաբորատորիաներում աշակերտների համար իրականացվեցին բազմամետաղային հանքաքարից մետաղների ստացման փորձեր:

Դրանից գատ երևանից ժամանած երկու պրոֆեսորները՝ Արմեն Գրիգորյանը և տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Աղբալյանն անցկացրին վարպետաց դասեր՝ հանքարդյունաբերության մասնագիտությունների գծով, մեկը՝ «Լեռնային գործ» մասնագիտացման, մյուսը՝

«Մետալուրգիայի»:

Չանգեզուրի վերջում Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Լեռնիկ Պետրոսյանը «Էքսպոյի» մասնակից աշակերտներին հանձնեց «Ապագա ճարտարագետ» մակագրությամբ հուշանվերներ:

Ժամը 14-ին ներկայացուցչական կազմով տեղի ունեցավ խորհրդածրոյի, որի թեման էր «Ճարտարագիտական կրթության հնարավորությունները», դրան անջվող գործառնությունները տարածաշրջանում, առավել ևս՝ Այոնիքում: Մասնավորապես տպավորիչ էր պրոֆեսորներ Արմեն Գրիգորյանի և Սուրեն Աղբալյանի մասնակցությունը խորհրդածրոյի, որոնց ավանդն անուրանալի է մասնաճյուղի ամբիոնների ձևավորման ու կայացման գործում և այժմ էլ արդյունավետ համագործակցություն են ծավալում: Հատկապես հիշատակելի է Սուրեն Աղբալյանի ավանդը, որը մասնաճյուղի դասախոսների համար, ովքեր հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն:

Խորհրդածրոյը տևեց երկու ժամից ավելի, ինչից հետո օրվա խորհրդի պատշաճ ելույթներ: Իսկ վերջում աղանդերի սեղանի շուրջ ավելի ամբողջացան կարծիքները՝ առաջին անգամ անցկացվող նման միջոցառման վերաբերյալ:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ







# Առաջնախաղ՝ Գորիսի թատրոնի բեմում



Մարտի 27-ին՝ թատրոնի միջազգային օրը, Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում բեմադրվեց չեխ դրամատուրգ Կարել Չապեկի «Մայրը» պիեսի Ներկայացման առաջնախաղը:

Ներկայացման երաժշտական ձևավորողն ու ռեժիսորն էր Ասյա Սիրեկանյանը, հասարակայնության հետ կապերի պատասխանատուն՝ Գայանե Միքայելյանը, նկարչական ձևավորողը՝ Անի Կրեչյանը: Դեպքերը տեղի էին ունենում 2-րդ համաշխարհային պատերազմից առաջ՝ Չեխոսլովակիայի քաղաքներից մեկում, որտեղ քաղաքացիական կռիվներ էին ընթանում: Գլխավոր դերում մայրն է, ով այդ կռիվներում կորցնում է ամուսնուն ու չորս զավակին, այնուհետ իր շուրջը համախմբում նրանց ուրվականները, գրուցում նրանց հետ, ինչպես նախկինում էր, նույնքան բնական, որպիսին եղել են նախքան զոհվելը:

Գորիսի թատրոնն իր նոր տնօրեն Սյուզաննա Խաչատրյանի ու աշխատակազմի ուժերով կարծես նորից փորձում է վերակենդանանալ...



Պիեսն ինքը ծայրից ծայր միջակաևության կնիքն է կրում, բայց, ասես, դա այնքան էլ կարևոր չէր, քանի որ մայրը նրանց մեջ տեսնում է ողջերին, ովքեր մարտնչել ու զոհվել են հայրենիքի համար: Ներկայացման գլխավոր դերակատարներն էին Վանուհի Խաչատրյանը, Միքայել Մաշուրյանը, Ակսել Բակունցը, Սիեր Ղազարյանը, Նվեր Մանուցյանը, Յարոսլավ Բադիրյանը և Կամո Մանասյանը: Ներկայացումն ընթանում էր գունային հետաքրքիր ու տպավորիչ էֆեկտներով, պարզության մեջ խորհրդավոր դեկորներով, մեկ՝ տազնապալի, մեկ՝ խաղաղավետ երաժշտությամբ, ինչը կլանված էր պահում հանդիսատեսին, գեղարվեստականությամբ: **Շարունակությունը՝ էջ 8**

# Կանայք հանդես եկան ցուցահանդես-վաճառքով

Ջաջարանի մշակույթի պալատի նախաձեռնությամբ կանանց միամսյակին նվիրված միջոցառումների շրջանակում արդեն երկրորդ տարին է՝ իրականացվում է Ջաջարանի համայնքի կին ձեռներեցների աշխատանքների ցուցահանդես-վաճառք: Ապրիլի 3-ին պալատի ճեմասրահում իրենց աշխատանքները ցուցադրեցին ինչպես արդեն համայնքի բնակչությանը քաջածանոթ մասնակիցները, այնպես էլ սկսնակ, նոր բացահայտված գործարար անհատները:



Այս տարի նկատելի էր նաև ցուցահանդես-վաճառքի մասնակիցների թվի ավելացումը: Ողջունելի է այն փաստը, որ մասնակիցներից գրեթե բոլորը հիմնական աշխատանքին կամ երեխայի խնամքին զուգահեռ կարողանում են ժամանակ հատկացնել իրենց նախասիրություններին, ինչպես նաև մասնակից լինել համայնքում տեղի ունեցող միջոցառումներին: Տոնավաճառն աչքի ընկավ բազմազանությամբ ու աշխուժությամբ: Ներկայացված էին ձեռագործ, ուլունքագործ պայուսակներ և աքսեսուարներ (Արմինե Կարապետյան, Շուշան Խաչատրյան), տիկնիկներ (Շուշան Խաչատրյան), դեկորատիվ ծաղկային կոմպոզիցիաներ, աքսեսուարներ և զարդեր (Գոհար և Գեղուհի Ասատրյաններ), ձեռագործ զգեստներ (Շողիկ Մամիկոնյան), մոմերի մեծ տեսականի (Ռիմա Աբրահամյան), տեքստիլ արտադրանք (Ելենա Աբրահամյան), ասեղնագործ և ուլունքագործ նկարներ (Սինարա Ալեքսանյան), ուլունքագործ սրբապատկերներ (Մելանյա Մարտիրոսյան), յուղաներկ կտավներ (Վարդուհի Բեջանյան, Անուշ Յակոբյան), լուսանկարների շարք (Անուշ Յակոբյան): Տոնավաճառի այցելուները հնարավորություն ունեցան համոզվելու և ձեռք բերելու համեղ ու յուրահատուկ ուտեստներ. թթխմորով հացերի լայն տեսականի (Արփինե

Ավետիսյան), բնական հումքից պատրաստված շոկոլադներ (Մանե Յարոբյանյան), հրուշակեղենի տեսականի (Նոնա Իսրայելյան), Էկոլոնֆետներ, համեմունքներով պահածոյացված չորալուլիկներ (Արաքսյա Իսրայելյան): Տոնավաճառի այցելուներին անակնկալ էր սպասվում. նրանք ակնատես եղան շոկոլադի և մոմերի պատրաստման վարպետաց դասերին՝ մասնագետներից ստանալով իրենց հետաքրքիր հարցերի պատասխանը: Նախաձեռնությունը նպատակ ուներ բացահայտել համայնքի շնորհալի կանանց, հնարավորություն տալ նրանց՝ ներկայանալու իրենց գործունեությամբ և ճանաչում ձեռք բերել:

Չուսով ենք՝ նրանց օրինակը ոգեշնչման աղբյուր կլինի, և այս ցուցահանդես-վաճառքն ավանդույթ կդառնա՝ էլ ավելի ընդլայնելով մասնակիցների քանակն ու ներկայացված գործերը: **ԻՐԻՆԱ ՅՈՎԻՏՆԻՍՅԱՆ**



